ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ն. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Փետրվարի 28-ին, ուրբաթ օրը, ժամը 12-ին, **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը** Երևանում այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության **նախագահ Ն. Խ. Հարությունյանին:**

Հայոց Հայրապետին ընկերակցում էին Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը և Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը:

Հայոց Հայրապետի և Հայաստանի հանրապետության մեծահարգ պարոն նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սիրալիր մթնոլորտում:

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի **նախագահ պարոն Ս. Գասպարյանը:**